ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
REPUBLIC OF ARMENIA
ARAGATSOTN MARZ
MUNICIPALITY OF TALIN

0501 ք.Թալին Գայի 1
Հեռ 060-75-77-87
Էլ.փոստ : talinihamaynqapetaran@list.ru

0501 t.Talin
Tel.060-75-77-87
Email:talinihamaynqapetaran@list.ru

N° 56/2540

19 08 2025թ

«Դիմա Մադոյան» ԱՁ
հասցե՝ 0028 ՀՀ ք.Երևան, Մուսաելյան 6
Հեռ +37494354777
Դիմա197504@բկ.ru
ՀՎՀՀ 0212127

## Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
**Հայտը մերժելու մասին**

Թալինի համայնքապետարանի կողմից 30.07.2025թ-ին հրապարակված **«ՀՀ ԱՄ ԹՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/108»** ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած և ընտրված մասնակից ճանաչված **«Դիմա Մադոյան» ԱՁ-ին 15**.08.2025թ-ին ուղարկվել է ծանուցում սխալ և պակաս ներկայացրած փաստաթղթերը մեկ աշխատանքային օր ժամկետում ճշտելու և ներկայացնելու համար, համաձայն **Գնումների գործընթացի կազմակերպման կարգի մասին 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 41-րդ կետի, սակայն նշված ժամկետում մինչև 18.08.2025թի ավարտը ԱՁ-ի կողմից չի ներկայացվել ճշտված և պակաս փաստաթղթերը 19.08.2025թ-ի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Դիմա Մադոյան» ԱՁ-ի հայտը համաձայն** Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետերի դրույթները հետևյալն է՝

Հոդված 6. Մաս 1-ին կետ 6)

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով, մասնակցի հայտը մերժվել է և ընթացակարգը չկայացած լինելու մասին հայտարարությունը և ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում «Չկայացած գնման ընթացակարգի մասին հայտարարություն» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Մասնակցը, հայտը մերժելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Հայտը մերժելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև մասնակցի էլեկտրոնային փոստին:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա

լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է հայտը մերժելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**Թալին համայնքի ղեկավար** **Տ.Սափեյան**